# ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂԻ ԱՐՏՈՆՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՏԱՐԵՑ ԿԱՄ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ/ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՄ ԱՋԱԿՑՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՆԴԵՊ) [ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 12305.81] (ՀԱՍՑԵԱՏԵՐ)

Վարչաշրջան՝ ______________

Ծանուցման ամսաթիվը՝ ______________
Հայցորդ տրամադրողի անունը՝ ______________
Ստացողի անունը՝ ______________
Ստացողի գործի համարը՝ ______________
IHSS գրասենյակի հասցեն՝ ______________
______________
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ ______________

Ուղղված՝Տնային աջակցության ծառայություններ (IHSS) Ստացողին

Քրեական դատապարտման պատճառով, անձնավորությունը, որին դուք ընտրել եք՝ ձեզ IHSS ծառայություններ տրամադրելու համար, ______________________________, իրավունք չէ ստացել նման ծառայություններ կատարել: Նա իրավունք չունի վարձատրություն ստանալ IHSS ծրագրից՝ ձեզ կամ որևէ այլ անձի ծառայություններ տրամադրելու համար:

Որպես տրամադրողի գրանցման գործընթաց, այս անձնավորությունը մատնահետքեր է ներկայացրել Կալիֆորնիայի արդարադատության դեպարտամենտ՝ հանցագործ կենսագրության ստուգման համար: Կենսագրության այս ստուգումը կամ դատարանի փաստաթուղթը ցույց տվեցին, որ նա դատապարտված է եղել այնպիսի հանցագործության (հանցագործությունների) համար, որ այն իրավունք չի տալիս նրան դառնալ IHSS տրամադրող և վճարում ստանալ IHSS ծրագրի ծառայություններ տրամադրելու համար՝ Բարեկեցության և Հաստատությունների Օրենսգրքի 12305.81բաժնի համաձայն: Այն հանցագործությունը (ները), որը որակազրկել է (են) նրան, թվարկված է ստորև.

- Տարեց անձի կամ կախում ունեցող չափահասի հանդեպ բռնություն, և/կամ
- որոշակի բռնություն երեխայի հանդեպ և/կամ
- Խարդախություն կառավարության առողջապահության պահպանման կամ աջակցող ծառայությունների ծրագրի դեմ:

Տրամադրողի քրեական դատապարտման վերաբերյալ տեղեկատվությունը չափազանց զգայուն բնույթ է կրում և պետք է խիստ գաղտնի պահվի: Ձեզ օրենքով արգելվում է այս տեղեկատվության ցանկացած մաս որևէ  անձի կամ հաստատության հայտնել:

Քանի որ այս ծառայություն տրամադրողը ճանաչվել է որպես IHSS-ի ծառայությունները մատուցելու իրավունք չունեցող՝ դուք պետք է ընտրեք մեկ այլ անձի՝ գործելու որպես ձեր IHSS ծառայություն տրամադրող: Եթե դուք նախընտրեք շարունակել ծառայություններ ստանալ այս անձնավորությունից, դուք պատասխանատվություն կկրեք նրան վճարել ձեր սեփական միջոցներից՝ տրամադրված ցանկացած ծառայության համար:

Եթե դուք օգնության կարիք եք զգում այլ տրամադրող գտնելու հարցում, զանգահարեք՝__________: